Հաստատում եմ՝
Տնօրեն՝ AVAGYAN LUSIK 5704780199 Digitally signed by AVAGYAN LUSIK 5704780199 Date: 2022.10.11 19:43:10 +04'00' /Լ. Ավագյան/
<<29>> օգոստոսի 2022թ.

<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի

ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

11-րդ Ա դասարան

Իրինա Եղիազարյան
դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

<<2022-2023>>ուսումնական տարի

ԿՐԹԱ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) 2022- 2023 ուս. տարում 11-րդ դասարանը բաղկացած է 18 աշակերտներից, որոնցից 11-ը տղաներ են,7-ը՝ աղջիկներ։Դասարանում կան, 4հարվածային սովորող աշակերտներ, 4 ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներ,նրանց հետ աշխատանքներ են տարվում ուսման որակը և առաջադիմությունը բարձրացնելու համար։Դասարանում տիրում է հարգանքի և փոխըմբռնման մթնոլորտ։Աշակերտներն ունեն տարբեր նախասիրություններ։

1. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

1. Բոլոր աշակերտներին ապահովել դասագրքերով։Հետևել,որ բոլոր աշակերտներն ունենան անհրաժեշտ գրենական պիտույքներ և օրագրեր։

2. Լավ սովորող աշակերտներին ներգրավել՝ օգնելու թույլ սովորող աշակերտներին ուսման մեջ հաջողությունների հասնելուհամար։

3. Միշտ ուշադրության կենտրոնում պահել անկարգապահ աշակերտներին։

4. Պահպանել դասղեկ-ծնող կապը։Ծնողներին ընդգրկել ուսումնա-դաստիարակչական աշխատանքներում։

5. Աշակերտներին ծանոթացնել ազգային և համամարդկային արժեքներին, նրանց մեջ ձևավորելով և զարգացնելով դրանք արժևորելու կարողություններ։

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն- Աշակերտներին ծանոթացնել Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոն ընդունման պատմությանը։Զրուցել Հայ Առաքելական եկեղեցու կատարած դերի մասին։Աշակերտներին ծանոթացնել «Աստվածաշնչյան պատմություններ» գրքին։Ընթերցել և մեկնաբանել հատվածներ «Աստվածաշունչ» գրքից։

3. 2 Գեղագիտական դաստիարակություն - Աշակերտների մեջ գեղեցիկը տեսնելու և գնահատելու կարողություններ զարգացնելու նպատակով նրանց սովորեցնելհասկանալու և գնահատելու բարձրարժեք արվեստի գործեր։ հաճախակի էքսկուրսիաներ կազմակերպել Հայաստանի պատմա-ճարտարապետական կառույցներ, թանգարաններ, պատկերասրահներ։

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն —Աշակերտներին դաստիարակել հայրենիքի նկատմամբ անսահման սիրով և պատասխանատվությամբ, պատրաստակամ՝ հարկ եղած դեպքում կյանքի գնով պաշտպանելու հայրենիքը և հայրենի օջախը։ Անցկացնել զրույցներ և հայրենասիրական դասեր 44-օրյա պատերազմի և ադրբեջանական ագրեսիայի զոհ դարձած մերօրյա հերոսների և վիրավորների մասին

3.4 Ֆիզիկական դաստիարակություն —Աշակերտներին ֆիզիկապես կոփելու համար, նրանց ընդգրկել մարզական խմբակներում: Ինչպես նաև պարբերաբար անցկացնել մրցումներ ,սպորտլանդիաներ, որոնք միաժամանակ նպաստումեն նրանց առողջության ամրապնդմանը:Աշակերտների մոտ ճիշտ վերաբերմունք ձևավորել ֆիզկուլտուրայի դասերի և ընդհանրապես սպորտային պարապմունքների նկատմամբ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն- Երեխաներին դաստիարակել այնպես,որ նրանք աշխատանքի ժամանակ դրսևորեն հնարավորբոլոր կարողությունները: Աշակերտների մեջ անսահման սեր դաստիարակել դեպի աշխատանքը,որը բարօրության հիմքն է :

3.6 Բնապահպանական դաստիարակություն —Աշակերտներին դաստիարակել բնության նկատմամբ անսահման սիրով:Նրանց մեջ պատասխանատվություն ձևավրրել պահպանելու բնությունը:Աշակերտներին մասնակից դարձնել կանաչապատման և ծառատնկման աշխատանքներին:

4. Դպրոց-ընտանիք կապը —Անհրաժեշտ է երեխայի դաստիարակության գործընթացը իրականացնել դպրոց-ընտանիք համագործակցության շրջանակում:Անհրաժեշտ է ծնողների հետ նախապատրաստական աշխատանքներ ծավալել, ծանոթանալ աշակերտների ընտանիքների հետ,ծնողական ժողովների,թեմատիկ ևանհատականխորհրդատվությունների միջոցով, ծնողների հետ հոգեբանամանկավարժական զրույցներ ևսեմինարներ կազմակերպել,ծնողներին սովորեցնել հաղթահարել և կանխարգելել ընտանեկան կոնֆլիկտները, հաճախակի անցկացնել ծնողական ժողովներ,անցկացնել անհատական ևխմբային խորհրդատվություն,ծնողներին ներգրավել դասարանական աշխատանքների մեջ,ձևավորելով փոխադարձ վստահություն,խրախուսել դպրոցի և դասարանի կյանքում ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողներին:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	կատարողներ
01.09-02.09	Անցկացնել զրույց նվիրված «Գիտելիքի օրվան» 2.Հրավիրել աշակերտական ժողով՝ ընտրել աշակերտական խորհրդի նախագահ և անդամներ։	02,09	Դասղեկ,աշակերտներ

05,09-09.09	Քննարկել 1-ին կիսամյակի անելիքները,մի շարք կարգապահական և ուսումնադաստիարակչական հարցեր:	09,09	Դասղեկ,աշակերտներ
12.09-16.09	Անցկացնել զրույց՝ Ինչպես հաղթահարել ծուլությունը թեմայով:	16.09	Դասղեկ,աշակերտներ
19.09-23.09	Անցկացնել զրույց նվիրված ՀՀ Անկախության 31-րդ տարեդարձին	23.09	Դասղեկ,աշակերտներ
26.09-30.09	Անցկացնել զրույց նվիրված 44-օրյա պատերազմի և ադրբեջանական ագրեսիայի զոհ դարձած մերօրյա հերոսներին և վիրավորներին:	30.09	Դասղեկ,աշակերտներ
03.10-07.10	Անցկացնել զրույց «Ուսուցի՛չ,որին ես շնորհակալ եմ այն բանի համար,որ նա...» թեմայով	07.10	Դասղեկ,աշակերտներ
10.10-14.10	Անցկացնել զրույց. Մարդիկ,որոնց շնորհիվ մենք ապրում ենք» թեմայով:	14.10	Դասղեկ,աշակերտներ
17.10-21.10	Անցկացնել զրույց .Ինչ է հայրենասիրությունը» թեմայով:	21.10	Դասղեկ,աշակերտներ
31.10-04.11	Անցկացնել զրույց.Արտագաղթը չարիք է թեմայով»:	04.10	Դասղեկ,աշակերտներ
07.11-11.11	Անցկացնել զրույց.Գեղեցիկն ու տգեղը մեր կյանքում» թեմայով:	11.11	Դասղեկ,աշակերտներ
14.11-18.11	Անցկացնել զրույց.Արդյոք միշտ լավ է այնտեղ,որտեղ մենք չկանք» թեմայով:	18.11	Դասղեկ,աշակերտներ

21.11-25.11	Անցկացնել զրույց.Եկե՛ք զրուցենք» թեմայով։11-րդ դասարանի վարքի կանոնները։	25.11	Դասղեկ,աշակերտներ
28.11-02.12	Անցկացնել զրույց.Մասնագիտություններ,որոնք ընտրում ենք» թեմայով։	02.12	Դասղեկ,աշակերտներ
05.12-09.12	Անցկացնել զրույց նվիրված 1988թ.Դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժի տարելիցին	09.12	Դասղեկ,աշակերտներ
12.12-16.12	Հրավիրել աշակերտական ժողով՝ քննարկել կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների արդյունքները։	16.12	Դասղեկ,աշակերտներ
19.12-23.12	Անցկացնել զրույց նվիրված Ամանորին և Սուրբ Ծննդյան օրվան։Կազմակերպել ցերեկույթ.Ամանորի ավանդույթները տարբեր երկրներում» թեմայով։	23.12	Դասղեկ,աշակերտներ
09.01-13.01	Հրավիրել աշակերտական ժողով՝ քննարկել 2-րդ կիսամյակի անելիքները։	13.01	Դասղեկ,աշակերտներ
16.01-20.01	Անցկացնել զրույց.Լսելու կարողություն» թեմայով։2.Ներման մշակույթ,խաղաղության մշակույթ» թեմայով։	20.01	Դասղեկ,աշակերտներ
23.01-27.01	Անցկացնել զրույց.Դժվարություններ,որոնց բախվում եմ» թեմայով։	27.01	Դասղեկ,աշակերտներ
30.01-02.02	Անցկացնել զրույց.Հայաստանի այն վայրերը,որտեղ կուզեի լինել» թեմայով։	02.02	Դասղեկ,աշակերտներ
06.02-10.02	Անցկացնել զրույց արհեստների	10.02	Դասղեկ,աշակերտներ

	մասին.Արհեստավորը մինչև կեսօր է սոված մնում» թեմայով		
13.02-17.02	Անցկացնել զրույց նվիրված Հայ Առաքելական եկեղեցու ավանդական տոնակատարություններին.Տյառնընդառաջ»	17.02	Դասղեկ,հայ եկեղեցու պատմության ուսուցիչ,աշակերտներ
20.02-24.02	Անցկացնել զրույց.Երբ քեզ շրջապատում են սիրելի մարդիկ» թեմայով:	24.02	Դասղեկ,աշակերտներ
27.02-03.03	Անցկացնել զրույց. Ինչպես զգուշանալ խաբեությունից» թեմայով:	03.03	Դասղեկ,աշակերտներ
06.03-10.03	Անցկացնել զրույց նվիրված կանանց միջազգային օրվան՝ Մարտի 8-ին	10.03	Դասղեկ,աշակերտներ
13.03-17.03	Անցկացնել զրույց.Տակտի զգացողությունը հասուն լինելու նշան է» թեմայով:	17.03	Դասղեկ,աշակերտներ
20.03-24.03	Անցկացնել զրույց.Ծնողներս ինձ համար,ես՝ ծնողներիս» թեմայով;	24.03	Դասղեկ,աշակերտներ
03.04-07.04	Անցկացնել զրույց նվիրված Մայրության և գեղեցկության օրվան՝Ապրիլի 7-ին	07.04	Դասղեկ,աշակերտներ
10.04-14.04	Անցկացնել զրույց.Ինչպես եմ պատկերացնում ինձ դպրոցն ավարտելուց 10 տարի անց» թեմայով:	14.04	Դասղեկ,աշակերտներ
17.04-21.04	Անցկացնել զրույց.Ընտանիքի դերը երեխաների արժեքային համակարգի ձևավորման վրա» թեմայով:	21.04	Դասղեկ,աշակերտներ
24.04-28.04	Անցկացնել զրույց նվիրված Ապրիլի 24-ին՝	28.04	Դասղեկ,աշակերտներ

	Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին։		
02.05-05.05	Անցկացնել զրույց նվիրված Աշխատավորների օրվան՝Մայիսի 1-ին»։	05.05	Դասղեկ,աշակերտներ
08.05-12.05	Անցկացնել զրույց. Ինչ է ահաբեկչությունը,ինչպես պայքարել դրա դեմ» թեմայով։	12.05	Դասղեկ,աշակերտներ
15.05-19.05	Անցկացնել զրույց.Էրացուցիչ պարապմունքների մասին» թեմայով։2.Հրավիրել աշակերտական ժողով՝ քննարկել 2-րդ կիսամյակի արդյունքները։	19.05	Դասղեկ,աշակերտներ
22.05-26.05	Կազմակերպել էքսկուրսիա.Իմ հայրենիքի գողտրիկ անկյունները» թեմայով։	26.05	Դասղեկ,աշակերտներ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

անցկացման օրը	դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	ծանոթություն
01.09	Զրույց նվիրված «Գիտելիքի օրվան»	Կատարված է
23.09	Զրույց նվիրված ՀՀ Անկախության 31-րդ տարեդարձին	Կատարված է
30.09	Զրույց նվիրված 44-օրյա պատերազմի զոհ դարձած հերոսներին	Կատարված է
07.10	Զրույց նվիրված ուսուցչի օրվան	Կատարված է
21.10	Զրույց՝ «Ինչ է հայրենասիրությունը»	
Դեկտեմբեր	Ցերեկույթ՝ «Ամանորի ավանդույթները տարբեր երկրներում»	
Փետրվար	Զրույց՝Հայ եկ. ավանդական տոնակատարություններ.Տյառնընդառաջ	

Ապրիլ	Զրույց նվիրված Ապրիլի 24-ին՝Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին	
Մայիս	Զրույց նվիրված Աշխատավորների օրվան՝Մայիսի 1 -ին	
Մայիս	Էքսկուրսիա՝Իմ հայրենիքի գողտրիկ անկյունները»	
Հունիս	Էքսկուրսիա դեպի Լոռի՝այցելություն Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան	

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

անցկացման օրը	քննարկվող հարցեր	ժողովի համառոտ բովանդակությունը	ծանոթություն
05.09	Ծնողական խորհրդի ընտրություն	Քննարկել նոր ուս.տարվա ընթացքում աշակերտների և ծնողների առջև դրվածխնդիրները	Կատարված է
Հոկտեմբեր	11-րդ դասարանի աշակերտների ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկությունները	Ծնողներին ծանոթացնել աշակերտներիտարիքային, ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկություններին	
Դեկտեմբեր	1.Վատ սովորույթներն ու դրանց հետևանքները.2.1 –ին կիսամյակի արդյունքները և 2 –րդ կիսամյակի անելիքները	Ծնողներին ներկայացնել յուրաքանչյուր վատ սովորույթի ազդեցությունը երեխայի անհատականության վրա.	
Հունվար	1Քննարկել 1-ին կիսամյակի արդյունքները.2.Ինչպես	Ծնողների հետ զրույցի ընթացքումբացատրել կոնֆլիկտային իրավիճակներից դուրս գալու միջոցները:	

	պահել իրեն կոնֆլիկտային իրավիճակում		
Մարտ	Բնավորությունը և նրա ազդեցությունը բարձր դասարանցիների ուսումնական ձեռքբերումների վրա	Ծնողների հետ զրույցի ընթացքում բացատրել բնավորության լավ և վատ կողմերի ազդեցությունը երեխայի ուսման վրա։	
Ապրիլ	Ընտանիքի դերը երեխաների արժեքային համակարգի ձևավորման գործում	Ծնողների հետ զրույցի ընթացքում բացատրել ,որ անհրաժեշտ է ընտանիքում համակարգել արժեքները ըստ իրենց ունեցած կարևորության ու նշանակության.Լավ կրթություն,լավ աշխատանք և կարիերա,,երջանիկ ընտանիք,առողջություն,ինքնավստահություն և հավատ սեփական ուժերի հանդեպ և այլն։	
Մայիս	1.Ինչպես օգնել երեխային ապագա մասնագիտության ընտրության հարցում 2.Քննարկել 2-րդ կիսամյակի արդյունքները։	Ծնողների հետ զրույցի ընթացքում պարզել երեխաների և ծնողների մասնագիտական նախասիրությունները,օգնել ծնողներին պատկերացում կազմելու իրենց երեխաների մասնագիտական կողմնորոշման մասին, ցույց տալ,թե որ մասնագիտություններն են առավել արդիական։	

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

անցկացման օրը	քննարկվող հարցեր	զրույցի համառոտ բովանդակությունը	ծանոթություն
06.09	Աշակերտի օրվա ռեժիմը	Ծնողների հետ զրույցի ընթացքում բացատրել,որ ծնողները հետևեն երեխայի օրվա ռեժիմին,որպեսզի նրանք արդյունավետ օգտագործեն իրենց ժամանակը հանգստի և դասերի պատրաստման համար	Կատարված է
Հոկտեմբեր	Ծնողների անձնական օրինակի ուժը	Զրույցի միջոցով բացատրել,թե որքան կարևոր է ծնողի անձնական լավ օրինակի դրական ազդեցությունը երեխայի վրա:	
Դեկտեմբեր	Ինչպես օգնել դպրոցականին ստեղծագործական կարողությունների զարգացման գործում	Զրույցի միջոցով բացատրել,որ անհրաժետ է բարենպաստ պայմաններ ստեղծել երեխայի հանգստի և ստեղծագործական մտահղացումները իրականացնելու համար	
Հունվար	Կարգապահությունը մարդու կյանքում	Զրույցի միջոցով բացատրել կարգապահության անհրաժեշտության մասին,որպեսզի երեխան գիտակցի և պատասխանատվություն կրի սեփական արարքների համար:	

Մարտ	Մեծերի և փոքրերի հարաբերությունները ընտանիքում	Զրույցի միջոցով բացատրել,որ ընտանեկան դաստիարակության շատ խնդիրներ կապված են ծնողի և երեխայի իրար ոչ ճիշտ հասկանալու հետ,փորձել վստահել երեխային և վստահություն ձեռք բերել նրա կողմից,սովորեցնել նրան ապրել կանոններով՝օրինակ ծառայելով սեփական արարքներով։	
Մայիս	Երեխայի բարոյական դաստիարակությունը ընտանիքում	Ծնողների ուշադրությունը հրավիրել այն փաստին ,որ երեխայի արժեքային համակարգը ձևավորվում է ընտանիքում, ինչ բարոյական նորմեր են գործում Ձեր ընտանիքում,երեխայի որ արարքն է խրախուսվում կամ արժանանում հանդիմանության։	

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ

անցկացման օրը	քննարկվող հարցեր	ծնողկոմիտեի նիստի համառոտ բովանդակությունը	ծանոթություն
05.09	Դասարանի կահավորում,դասագրքերի վարձավճարների	Օգնել դասղեկին և աշակերտներին մաքրելու և կահավորելու դասարանը,կազմակերպել դասագրքերի վարձավճարների հավաքումը։	Կատարված է

	հավաքում		
Նոյեմբեր	Եթե երեխան վատ շրջապատ է ընկել	Զրույցի միջոցով պարզել երեխայի վարքի և պահվածքի կանոնների շեղումները,որը հետևանք է նրա կենսակերպի, մտածողության,միջավայրի,որտեղ նա մեծանում է:Հետևել երեխայի յուրաքանչյուր քայլին,լինել ուշադիր և հոգատար նրա հանդեպ:Անձնական օրինակով երեխային ճիշտ ուղու վրա դնել:	
Հունվար	Հեռուստահաղորդումների օգտակարության և վնասակարության մասին	Հետևել,որպեսզի երեխաները նայեն ուսուցողական և կրթա-մշակութային հաղորդումներ,	
Ապրիլ	Ինչպես պայքարել անտարբերության դեմ	Բոլոր դաստիարակչական միջոցառումները ուղղել դեպի մարդասիրական,պաշտպանված,անվտանգ ,երկկողմանի պատասխանատվության միջավայրի ստեղծմանը,դիմացինին օգնելու պատրաստակամության դրսևորմանը	
Մայիս	Աշակերտի իրավունքներն ու պարտականությունները	Երեխաներին զինել իրավունքի, իրավական նորմերի,անհատի նպետության հարաբերությունների վերաբերյալ գիտելիքներով,զարգացնել քաղաքացիական արժեքներ,բարոյական դիրքորոշումներ,մարդասիրական աշխարահայացք,սեփական իրավունքների գիտակցում,ձևավորել բարոյաիրավական հատկանիշներ՝խիղճ,պատասխանատվություն,արդ	

		արություն:	

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Գործառույթներ	Նպատակն ու խնդիրները	Ուղղվածությունը
1. Աշակերտի սոցիալական պաշտպանության գործառույթ	1.Դասարանական կոլեկտիվի ձևավորում 2.Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված աշակերտների բացահայտում 3. Իրավիճակի ճշգրիտ վերլուծություն	1.Երեխայի արդյունավետ սոցիալական զարգացումը, նրա անհատականության ձևավորումը,հարմարեցումը գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական պայմաններին
2. Կազմակերպչական գործառույթ	1.Անհատի ձևավորմանը նպաստող,յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող,ներուժը բացահայտող միջավայրի ապահովում 2.Կանոնակարգել ներդասարանական փոխհարաբերությունները,խթանել առաջնորդության դրսևորումները,ձևավորել պատասխանատվության,փոխօգնության ,համագործակցության ոգի	1.Ծրագրել սովորողների բազմաբնույթ գործունեությունը՝ճանաչողական,աշխատանքային,գեղագիտական,ինչպես նաև նրանց՝ դասերից դուրս ազատ փոխհարաբերվելը,ինչը դպրոցականների ժամանցի մաս է կազմում:
3. Աշակերտական ինքնակառավարման խթանման	Սովորողների ինքնուրույնության խթանում	Հասարակական նշանակության նպատակների իրականացման համար որոշումներ կայացնելու և դրանք իրագործելու կարողության ձևավորում

գործառույթ		
4. Ախտորոշման գործառույթ	Աշակերտների ելակետային մակարդակի վերհանում և շարունակական համեմատության մեջ փոփոխությունների արձանագրում	Հետազոտել երեխայի անձը և անհատականությունը և վերհանել ստացվող արդյունքների անարդյունավետության պատճառները
5. Պլանավորման, ծրագրման գործառույթ	Կանոնակարգել մանկավարժական գործունեությունը,հետևողականորեն վերահսկել արդյունքները	
6. Սովորողների դաստիարակության գործառույթ	Միավորել դասավանդող բոլոր ուսուցիչների ջանքերը,2. Սահմանել սովորողների դաստիարակության ուղղությունները և իրականացնել համապատասխան միջոցառումները,	Անձի սոցիալական որակների ձևավորում ,նրա պատրաստվածությունը հասարակական կյանքի տնտեսական,քաղաքական ոլորտների բարդ համակարգում մասնակցության համար